

**«Գյուղատնտեսության նախարարությունը հայտարարում է բաց մրցույթ՝ «Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության սնունդի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:**

Տնօրենի պաշտոնում կարող է նշանակվել մինչև 65 տարեկան «այն գործունակ քաղաքացին, որն ունի համապատասխան բնագավառի բարձրագույն կրթություն, ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում «Սահմանադրություն, համապատասխան ոլորտի «օրենսդրություն և այլ իրավական ակտեր), պետական կազմակերպության զարգացման և բարեփոխման հայեցակարգ, հիմնադրույթներ մշակելու կարողություն:

Լրացուցիչ պայմաններն են՝

տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություն, ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն, առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Դիմող «քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում/ ձևը լրացվում է փաստաթղթերը հանձնելիս/,
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- անձնագրի պատճենը,
- արական սեռի անձինք՝ զինգրքույկ կամ զինգրքույկին փոխարինող փաստաթուղթ,
- ինքնակենսագրություն,
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),
- քաղվածք աշխատանքային գրքույկից,
- տեղեկանք մշտական բնակության վայրից,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում) :

Մրցույթին մասնակցելու փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով, անձնակազմի կառավարման բաժին:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև 12:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

**Դիմումներն ընդունվում են 2015թ. հունվարի 29-ից մինչև փետրվարի 7-ը:**

**Մրցույթը տեղի կունենա 2015թ. մարտի 3-ին՝ ժամը 10:00-ին, «Կառավարության 25.01.2005թ. N 224-Ն որոշման և «Գյուղատնտեսության նախարարի 10.08.2005թ. N 129-Ն հրամանի համաձայն՝ նախարարության շենքում (Երևան, Կառավարական տուն, 3):**

Տեղեկությունների համար դիմել «Գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին /հեռախոս՝ 011-52-58-57/: